

ՄԱՄԱԽԱՆ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍԸ

Ա. ՏԱՐԻ

15 ՅՈՒԼԻՍ 1912

ԹԻԻ 19

Խմբագրող

Մ. ԻՓԷՔՅԱՆ

Արտոնագր

Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր դահլիճը կրնայ գործել (խմբ.)
Օտարին ետեւէն մի՛ երբաք
Եղբւանիներ (Բան.)
Տնտեսագիտութեան կարեւորութիւնը
Աշխարհի յեղափոխական մեծ շարժումները
Բաց նամակ
Կրթաւոր ազգայնաց
Երկու հետաքրքրական տոմար (խմբ.)

Դաւադային եւ տեղական լուրեր

Մ. ԻՓԷՔՅԱՆ
ԽՈՐԷՆ Ա. ՔԶՅ. ԳԵԼԵՍՆՅԱՆ
ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ
Գ. ՍԵՐՈՅԵԱՆՅ
Թ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԱՄԱՍԻԱ

Տպագ. ՅՈՒՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏՐՄԵԱՆ

ԱՄԱՍԻԱԻ ՀՈՍՏԷՆ

آماسیہ دہ «آماسیہ» غزنوی مدیریۃ

Իմպագրոպիան «ԱՄԱՍԻԱ» Կիսամյայ հանդեսի-Պանասիա
Réduction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 1րն եւ 15ին, թուրքերէն եւ հայերէն
բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12
էջ. երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն
հարեկան 24 քիւ պիտի տուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիա հարեկան 4 մեհիս	Արսաւահեան հարեկան 5 ֆր.
» վեցանսկայ 0.50 »	» վեցանսկայ 2.50 »

Բաժնէջինը քաջարձակապէս կանխիկ է: Դաճուցումներու համար ա-
ռանձին նպաստաւոր պայմաններ կը տրուին:

Տասը օրինակ «Ամասիա» սպառողին մէկ օրինակ հովէր:

ԵՐԳԵՅԻ

ՀԵՂԻՆԱԿ ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ

Գոյսրիկ քանդակագործական հասարակութիւնը 288 էջերէ բաղկացեալ: Վա-
րձու եւ հաճեցէ՛ք սպագրոպեալք ուր պիտի գտնէք պատմականական վստ երե-
ւակալութեան սիրուն եւ յաջող կտորներ:

Կը շնորհակալուիմք հաւատարմութեան. ստանալու համար պէ՛տ է դիմել
Տեղաւ Տեղաւ Արեւելագոյ Երկրագործ.

Գին Թուրքիոյ համար 10 դանական

Եւրոպայի » 2 Դրանք

Առաւել » 90 Կոպէկ

ԽԱՐԱԽԱՔ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

15 ՅՈՒԼԻՍ 1912

ԹԻԻ 19

Խմբագրական

ՆՈՐ ԴԱՅԼԻՃԸ ԿՐՆԱՅ ԳՈՐԾԵԼ

Նոր գահյիճի կազմութիւնը թէպէտ ընդհանուր կերպով յայտի նշոյլ մը ցոյց տուաւ թուրքիոյ նաւր անգործ նաւապետներէ աննուած՝ գիտակից և փորձ ձեռք բերող յանձնուած ըլլալու վստահութիւնը ներշնչելով, սակայն կը տեսնենք թէ նաւապետներուն մէջ արամազրութիւն չկայ հետեւելու իրենց հրամանատարին հրահանգներուն, քանի որ իթիֆհատի կեդրոնը երբեք տւր արամազրութիւն ցոյց չի տար երեսփոխանական ժողովին լուծման հաւանելու։ Աւ երբ երես. ժողով ու գահյիճ, սկըսեցաւ համալուծմանով ու գործելու կերպով կը խաչաձեւեն զիրար՝ բնական է թէ մէկ երկրին գործերը կը մնան այն գոթապղ իրականութեան մէջ, ինչ որ ճշմարիտ հայրենասէր մը սրտի գառն սեղմումներով պիտի հետեւէր օրուան գէպքերուն։

Մենք, տեսնելով գէպքերը այս յուսահատեցուցիչ կացութեան մէջ, և հիմնուելով մեր նախորդ խմբագրական ուղղութեան վրայ, (որուն համար զատական հեռապնդումներէ ազատած չունինք) կուգանք կրկնապէս շեշտել սա պարագան թէ փոքրիկ բարեօճակամ տրամադրութիւն մը պիտի բաւէր մեզ ազատելու այս նեղ դրութենէն։

Օրուան վարչութիւնը ինչ տեսակ ուժերէ նալ կազմուած ըլլայ, բնական է թէ ան պիտի քննադատուի և այդ քննադատութիւններն են որ անոր ուղղութիւնը պիտի ճշդեն, սակայն ցաւալի կէտը՝ 4 տարիի իվեր երկրին գէ-

կը իր ձեռքին մէջ ունեցող Իթիֆհատար խուսափեցաւ լսելու այդ քննադատութիւնները. և իր մոլեգին վազքին մէջ ամէն ինչ որ իր առջև տկար զբտաւ՝ խորտակեց, փշրեց, քանդեց և ուղեց ինքն իսկ ըլլալ կացութեան բացարձակ տէրը. եղաւ ասեմք մը. սակայն խորհրդարանի մէջ կազմուած ընդգիմադիր ուժերու գոյութիւնը, ներքին արդէն իսկ անփորձ ուժերը ապագայ պարտութեան մը մղձաւանջէն խելայեղած ուղեցին այդ ևս քանդել. յաջողեցան Յորդ յողուածը իրենց միջոց ընտրելով, ասով ալ չի գոհացան, նոր ընտրութիւններու քուէներու վրայ այնքան ճնշեցին, որ միայն 4 ընդգիմադիրներ յաջողեցան մուտք գտնել նոր կազմին մէջ. և երբ յաջողութեան բարձրութենէն հեգնական կերպով կը դիտէին իրենց գէմ նետուած զրկուածի արհամարհող շանթող նայուածքները, ու ծիծաղելի միամտութեամբ մը իրենք իրենց ընտրածներէն վատահոլութեան քուէն մուրալով 4ի գէմ 194 քուէի բացարձակ յաջողութեան վրայ արբշիւ՝ օրուան և ապագային տէրերը ըլլալ կը կարծէին՝ 24 ժամուան կարճ միջոց մը բաւեց բուն իրական վիճակը ցոյց տալու և յաջողութեան մոլեգին վազքին առջև նետուելու այն արդեւոր՝ որ խորտակեր տարիներէ ի վեր չինել աշխատուած հմայքը:

Այսօր գոյութիւն չունի Իթիֆհատարական կազմ մը, սակայն կարելի պիտի ըլլար, գործերը իր նորմալ վիճակին վերածել. բացարձակապէս կրնանք ըսել թէ ո՛չ՝ առանց Իթթիհասի նեմարիս հայրենասիրական զգացումներու օժանդակութեան. թէ ինչո՞ւ, սրովհետեւ ան տեսնելով այս 4 տարուան մէջ բոլորող Արաբիա մը, Պոստա-Հէրսէք մը, Կրեաէ մը, Հուրոն մը, Ափրիկեան Տրիպոլիս մը, արեան մէջ լողացող Ատանտ մը, զրկուածներու, հաբըստահարուածներու, առեանգուածներու և ցեղին գոյութեան պահպանման համար աշխատող բոլոր մը Հայութիւն մը և Սահմանադրութեան համար կռուող Մակեդոնացիներու իրենց գէմ ծառացումը, այս բոլորը դասեր չեղան իրեն, և ինք այսօր իր մասնաճիւղերուն միջոցաւ կ'աշխատի ժողովրդային յուզումներ յառաջ բերելու: Մենք անգամ մը ևս կը մտանանջենք այս պարագան և կ'ուզենք ցոյց տալ Իթիֆհատի լիտրոններուն թէ իրենք եթէ ունին հայրենասիրութիւն, եթէ գեռ ևս Օսմանցիական անաղարտ արիւնք իրենց երակներուն մէջ կ'եռայ, և եթէ կ'ուզեն որ մեր երկիրը մերը մնայ, ու մենք մնանք անոր տէրը — երեւակայական միւրթեհներ. միւրթեկալիպեներ և բէաֆօնեհներ թող չի տեսնեն իրենց գէմ, այլ յետադարձ ակնարկով մը դիտեն անցեալը ու համեստութիւնը ունենան ըսելու թէ «մենք չի կրնանք վաբել երկիրը» աւելի լաւ և հայրենասիրական է այս կերպը:

ՕՏԱՐԻՆ ԵՏԵՒԷՆ ՄԻ ԵՐԹԱՔ

(Յօդուած Բրդ. առաջինը Տեա «ԻՐԻՍ» քիւ 4րդ.)

«Իրիս» իր Բրդ. տարեշրջանի առաջին օրէն իսկ եթէ գովելի բան մը ունեցաւ՝ այն ալ ազգային ամենակենսական խնդիրի մ'առջև իր էջերը լայնօրէն բանալն էր։ «Իրիս» արդար դատի մը պաշտպանութիւն չառաքողը հանդիսացաւ իր աշխատակիցներուն. ձեռքով։ Անոր յարգելի աշխատակիցներէն երկուքը մատենինն զուէն իսկ վերջին վրայ դրած են, այն վերջին՝ որ հայ ազգին կողմն վրայ լայնօրէն բացուած է դժբախտաբար։ Ծառանց, շատ շատանց կար այդ վերջը և մենք չ'աշխատեցանք բացուած օրէն վայն դարմանելու, թէև թեթև աշխատակիցները, անգոր ճիգեր ալ եղան՝ բայց այդ վերջը որ քան դժբ. լայնալ, բնդարձակուի սկսած էր ներսէն։ Աղագոսի բակտի նախանձանդութիւնով փառուած սիրտերու տէր այդ երկուքին, Մարկոսեանի և Գ. Վարուժանի մասնէրու առաջին հալածման իսկ պատուեցաւ այն և անոր մէջէն դուրս պոսիկաց թաւալը, անոր դարչելի հոտը կ'ապացուցանէր վերջին խորութիւնը և փռախախտեցութիւնը հաւատարմութիւնը, ինչ որ բացարձակ էր «Իրիս»ի քրդ. թու ՅԴրդ. էջին մէջ։

Հոս է լուսն գործը։ Բայրուած վերջ մը երբ անխնամ մնայ՝ թէև կ'ուզանայ՝ բայց ալ աւելի խորիւր կը ձգէ իր սպանիչ փռութիւնը։ Պէտք է ուրեմն հաւատաշարժը առնել ձեռք, կտրասել փռած մատիւրը, մաքրել ապականութիւնները, զննել աւոր վրայ սպիւններն և կապել խնամքով։ Ահա այն է մեր պարտականութիւնը, և նայր բոլոր հայերուն պարտականութիւնը։

Պէտք չէ թողունք որ մեր սիրտէն փրկւած, նոր աշխարհ տեսած հայ մատաղ սերունդը—ըստ մեր ազգին ազատգայ միակ

յոյսերն են—դատարարակաւն օտարի մը ձեռքով, անձանօթը մը խնամքին տակ, այդ սճիր մըն է որ կը գործուի մեր իսկ ձեռքով։

Պէտք չէ՝ թողունք որ մեր պատկերները սիրտի այդ հատորիկները, օտարի մը բռնաշնչներէն ձձեն այն կախը՝ որ չ'ազաւուած է համակ' ժրգուրքական մոլեռանդութիւններով, ինչու որ այդ կախը ապրելիցէն աւելի՝ մանուկին սիրտին մէջ կ'սպաննէ ինքնագիտակցութեան սղին, ազգասիրական դրացուծը և վեհ գաղափարի լուէալը։ Ո՛չ, պէտք չէ՝ թողունք, զի այդ անքուելի մեղք մըն է և օրուն չեն կրնար օժանդակել ո՛չ փութում և ո՛չ ալ ներպլուրեան ամսակ։

Անցած է դարը կայր կրօնամոլութեան հետեւումն, օրուն շատ մը կենդանի զոհերը կը բաւեն իբրև ազգայոց հառաւանդաւ համար թէ, այդ մարդանկաւիւնը իր օրըր ամբողջիկ հաստատուած է միգրուիք եկեղեցիին ծոյին մէջ։ Ապաւոյց կ'ուզէք, անաւտիկ իրենց յայտարարութիւնը։ Արաւքոյ Հովմանց եկեղեցւոյ չիք փրկութիւն»։ Եայտարարութիւն մը որ նայն իսկ չէ՝ լուսած քրիստոնէութեան համազօրէն։ Ինչու որ տնոր Ս. Աւետարանը խորի չի՝ դնել Գրիգորի անունով մկրտողներուն մէջ բլլան անոնք ազատ կամ ծառայ։ Մեր նպատակը քարոզուած Աւետարանի կրկնութիւնն ընել չէ՝, այլ՝ սա միայն հաւկըցնել կ'ուզենք թէ, այն ազգը որ իրմէ զատ ուրիշ ազգ չի ճանչնար, այն եկեղեցին որ իրմէ զատ եկեղեցի չի ճանչնար, և վերջապէս այն մարդը որ իրմէ զատ ուրիշ մարդ չի ճանչնար, մեղի իրաւունք կուտայ ըսելու թէ, ինք ևս ոչ ազգ, ո՛չ եկեղեցի և ոչ մարդ է։

Մենք կրօնական մոլեռանդութիւնով

է՛ որ այս սողերը կը գրենք. ո՛ր հայ եկեղեցին երբէք կրօնամուկ եղած չէ՛. անիկայ ազատամիտ եկեղեցի մըն է և այնքան ներողամիտ՝ որ թէ արեւելքի և թէ արեւմուտքի եկեղեցիներուն համար օրհնութիւններ կը կարգայ միշտ քանի որ քրիստոնեայ անունը կը կրեն իրենց վրայ, և անոնք որ կը փախաքին հայ Ս. եկեղեցւոյ բուն սգին հասկնայ՝ թող հաճին կարգաւ Օրմանեան Ս. ի L'Eglise Armenienne ը որ Հոռովմայ անսխալ Սրբազան Պապը արգելից կարգայ իր եկեղեցւոյ զաւակներուն և որ, Օրմանեան սրբազան շատերու խնդրանքին վրայ հայերենի վերածեց «Հայ եկեղեցի» անուամբ:

Մենք երբէք արգելած չենք որ հայ մը Ամերիկեան, Անգլիական և նոյն իսկ Թուրք վարժարաններ յաճախէ, և չենք ալ արգելիր, որով ետեւ անոնց մէջ կայր կրօնամուկեան մէկ նշոյլն անգամ տեսած չենք:

Սերաստիան ունի ամերիկեան երկսեռ վարժարաններ ուր հազարի մօտ երկսեռ հայ մանուկներ կը յաճախեն. Մարդուանր ունի ամերիկեան գոյէճ մը, որուն մէջ գտնուած երկսեռ ուսանողներու մեծագոյն մասը հայեր են և մենք ունինք Անաթոլիան գոյէճի չըջանաւարտներէն շատ մը երիտասարդներ՝ որոնք հայ ազգը հայ եկեղեցին այնպէս կը ճանչնան (Շարունակի)

ինչպէս որ կը ճանչնային հայ վարժարաններու մէջ, որովհետեւ մոլեռանդութեան, կրօնամուկեան սպանիչ միւրավր, այդ սեմերէն ներս գոյութիւն չունի կը կարծենք, որչափ որ ալ անոնք օտարի մը հաստատութիւններն են: Սակայն, կ'արգիլենք բոլոր հոգիովն իս և մեր բոլոր ուժով կը համարձակինք յայտարարելու թէ, այն ծնողքը որ կ'ուզէ իր զաւակը ո՛ղջ ողջ գերեզման դնել. թող յանձնէ զայն Յիսուսի անունն տակ ծրարութեամբ Perehrou գիրկը, որովհետեւ անոնք լաւ գիտեն սպաննել մանուկը սիրտով, մարիլ անոր սիրտին մէջ նոր վառիկ սկսած ազգասիրական ջանք: Հրեւովմի անսխալ սրտի ալդ հարազատ զաւակները շատ լաւ գիտեն խաւրիւնել մանուկը իրեն մի ծաղիկ՝ որուն կը զանայ հայն ըւր յիւթը և երկինք իր ցօղը:

Զգուշութիւն, ծնողքներ, ալ հերիք է, որքան Ձեր զաւակներու վաճիճները եղած էք: Զգուշութիւն, հայրեր, հեղինակք է այլեւս որքան ձեր զաւակներու զաճիճները եղած էք՝ պեղելով անոնց գերեզմանները ձեր իսկ ձեռքով՝ հոն թաղելու համար ո՛ղջ ողջ ձեր սիրտէն ելած այդ անմիկ հրեշտակները: Մի՛ շմարիք ձեր պղտիկներու թոթոված երկու բառ ֆրանսերէնէն՝ քանի՛ որ, ձեր արիւնի գինով ծախու առած մայրենի լեզուն, հայրենի կրօնը փոխադէն կուտաք անոր:

ԽՈՐԷՆ Ա. ՔԶՆՅ. ԳԱԼԵՐԱԷԱՆ

ԵԶՐԵՒԱՆԻՆԵՐԸ

Սիրոյ առաջին, ազուր ծաղիկներ,
Սեպակա վրայ կը քայտի ինձի,
Ձեր բուռումներէն սենեակս է լեցուեր,
Պատահանիս քով քիչ առաջ լացի:

Հեռաւոր սեղեր, հեռաւոր սեղեր,
Լքնակներու յուճ ափերուն վրայ
Նրագներու հետ սերս եմ բողեր,
Եւ հիմա սիրքս պարապ կը մընայ.

Հեռաւոր սեղեր սխաւաներու
Տերեւերուն հետ յոյսես եմ քափեր,
Հիմա սիրս չունիմ երգեր լրտելու,
Սիրոյ առաջին ազուր ծաղիկներ՝

Դու՛ք միայն կըմտաք լացրել ինձի,
Յիշատակներ էք հին զարուհներէս,
Պատահանիս քով քիչ առաջ լացի,
Հիմա ձեզի մօտ առանձին եմ ես.

Պիսի քառամիջ դուր վաղը շուտով
ինչպէս Մայիսի գեղեցիկ վարդեր,
ինչպէս սերերս իրենց յոյսերով,
է՛վ յիշատակի սիրուն ծաղիկներ:

Ու ձեզի համար սիրքս պիտի լայ,
Պիսի լայ մահը ձեռքեցիւքեան.
Դուք պիտի բռնիք սեղանիս վրայ,
Ո՛վ դուք առաջին ծաղիկներ գարնան...
ԱՐՄԷՆ ԵՐԿԱՅ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Թարգմանչ շատ մը կեդրոններուն մէջ,
առեւտրական նրաւարակ: վրայ գործող
ամէն աշխատ, գրեթէ զուրկ կը գտնուի
իր գործերը անասնագիտական սկզբունք-
ներու համաձայն վարելէ: Իրաւամբ ա-
մէն վաճառական, ամէն արհեստաւոր ու-
նի իր գործունէութեան շրջանակին մէջ
գործկու մասնաւոր ուղղութիւն մը, ու-
նի փորձառութիւն իր ընդգրկած աստղա-
բեկին վերաբերմամբ, բայց հարկ է ըստ-
թէ այդ բաւական չէ իսկական առաջդի-
մութիւն մընիւրեւ չէ շատ աղքատները
հաստատուն հիմերու վրայ կարենալ դը-
նելու համար: Տնտեսագիտական ծանո-
թութիւններու անգիտակ մէկը ստիպուած
պիտի յղայ յաճախ բազմին թողելու վը-
ճուի առեւտրական յաջող կամ ձախող եղ-
մը, ու այս է պատճառը որ սեանկու-
թիւններ պակաս չեն միշտ:

Գործի մարդեր յաճախ սովոր են ըսել
թէ ոչինչ կ'արժեն ուսումներ և գիտու-
թիւններ գործի մէջ. պէտք է ուսած լը-
լալ շուկայի էերականութիւն: Կ'ընդա-
նինք, այժմ, թէ գործնական կեանքի մէջ
պէտք է ունենալ փորձառութիւն ու
մասնաւոր pratique, բայց չենք կրնար
ընդունել թէ պէտք է բաւականանալ մի-
միայն ատով: Օտար, յուսաւորեալ եր-
կրներ պերճախօս օրինակ մը կուտան
մեզ թէ ինչ է գործնական կեանքի մէջ
զարգացած անհատներու տառաւիթութիւնը
և անոնց ունեցած դերը առեւտրական նը-
րաւարակի վրայ:

Ընդհանրապէս, արհեստական կարգ մը
նորութիւններ, բանուած ու ճաշակաւոր

չիտուածքներ ու արտադրութիւններ, սորե-
լուէ և օգտակար մեքենաներ են. և ինչ
ամբողջ մաքի մարդոց աշխատութեան
արդիւնքն են: Բայց աստի, վաճառակա-
նութեան մասին մշակուած սխալեմտութիւն
ծրադիրները, սկզբունքային և մեթոտիկ
ուղղութիւնները բոլոր դիտելի և տալան
աւոր անձնաւորութիւններու կողմէն
կուգան: Ու նոյնը պէտք է խմանալ նաեւ
տնտեսական բոլոր միջոցներուն ու կեր-
պելուն մէջ:

Բայց թէ ինչ միջոց կայ որ գէթ նորա-
հաս սերունդը պատրաստուէր նոյն այդ
ուղղութեամբ: Դիտելի է եզրակացնել
թէ այդ ուղղութիւնը պիտի նստի ինքն մեր
գաղութները: Առկայ շատ է յայտնել
նոյն ատեն որ մեր վարժարաններու մէջ
իր բնականութիւնով կը փայլի Բազ,
Տնտեսագիտութեան ուսուցումը, և շատ
գաղութներու մէջ կը տեսնուի թէ ծրադր-
ներու մէջ նոյն իսկ այդ գիտութեան ու-
նանն ալ չկայ: Չենք կարծեր թէ վար-
ժարանաց Ուսումնական Խորհուրդներ,
Տնօրէններ, Աւագ Ուսուցիչներ այդ գի-
տութեան կարեւորութիւնը մեզի չափ ըզ-
գացած չ'ըլլան: անոնք գիտեն և կրղ-
գան, բայց չի գիտցուիր թէ ինչ պատ-
ճառներու տակ կ'անտեսեն գոյն և կը
սահմանափակեն աշակերտութիւնը թուա-
բանական կամ, շատ շատ, տոմարակալա-
կան պարզ դիտելիքներով մէջ: Անհրա-
ժեշտ է լրջօրէն նկատել թէ Բազ, Տնտե-
սագիտութիւնը մին է այն գիտութիւն-
ներէն որ պիտի շնորհէ բարեւոք ընթացք
մը ժողովրդային ընդհանուր գործունէու-

թեան: Ի մէջ այլոց ան պիտի սովորեցնէ յարգել փոխադարձ իրաւունքներ, մղուիլ աշխատասիրութեան, ու ան պիտի ըլլայ զօրաւոր ազգակ մը շանու, և արդիւնաբերութեան մասին. ուստի հարկ է մեծ կարեւորութիւն տալ անոր ուսուցման մեր վարժարաններուն մէջ:

Մեր երիտասարդներէն շատեր, գործի և առևտուրի մէջ, շահադիտութեանց ու առևտրական սխալ ըմբռնումներու զոհ կ'երթան, ընդհանրապէս տգիտութեան և մասնաւորապէս տնտեսագիտութեան անտեղեակ ըլլալուն պատճառով: Կոյր հրնազանդութիւն և սիրայօժար համակերպութիւն ցոյց կուտան շատ անգամ իրենց բաքոնցներու ցոյց տուած առևտրական սխալ ճամբաներուն և ունեցած թիւր համոզումներուն. և ժամանակի ընթացքին մէջ տոնացածով կաղապարուելով կը դառնան առևտրական, այսպէս ըսենք, մէյմէյկ աճապարներ. Ստեյ, Եդնի. արժէք ունեցող ապրանք մը 10 ի ծախել, անմիջապէս շատերուն համար տեսակ մը խեղաթելութիւն և ճարպիկութիւն է. և այնպէս համոզուած են որ մարդ միայն այդ կերպով կրնայ դրամ շահել ու հաւրդատանալ: Ու տոտր իբր արդարացում կ'ըսեն, «Ինչ ընել, մեր միջավայրին մէջ առանց սուտի, առանց կեղծիքի կարելի չէ գործել առևտրական ասպարէզին մէջ, հակառակ շարժողը պիտի տուժէ»: Խեղճները նկատել չեն առնել երբեք թէ օտարներ ինչ կարծիք ունին այդ մասին և ինչ սեղութիւնով կրցած են սիրանալ այժմու մեծամեծ հարստութիւններուն: Մաք տ'Մնայ նշանաւոր տնտեսագէտը կը ըսէ, «Ուր որ տեսէք հարուստ երկիր մը, պէտք է վստահ ըլլաք թէ հոն բնակող ժողովուրդը բարոյական և դրական օրինաց նազանդ, ինչպէս նաեւ իր

պարտքերը լաւ կատարող անձերէ կը բաղկանայ: Պատշաճ է ուրիմն եզրակացնել թէ առևտրական ասպարէզի մէջ երբ սուտ ու կեղծիք կայ, հոն բարոյական չկայ, ու երբ տնտեսագիտական գէթ տարրական ծանօթութիւններէն զուրկ են շատեր ու ըստ քմայս կը գործեն, կը նշանակէ թէ դրական ու մասնաւոր օրէնք չկայ, ու երբ օրէնք չկայ պարտականութեան կատարում չկայ, այլ կայ միայն նիւթական և բարոյական փրճացում, ուրիշ ոչ ինչ: Սոսկ քաղաքական, արտաքին պատճառներ չեն որ կուգան ազգել առևտրական ճակատագրին վրայ, այլ աւելի ներքին, հակօրինական և անճաշ երեոյթներ կը դառնան պատճառ որ օրըստօրէ աղքատներու թիւը աւելնան և նիւթական ընդհ. անձկութիւն մը գայ տիրապետել:

Յառեցէ՛ք, գործը մարդեր, քիչ մը ձեր աչքը լուսաւորեալ կեդրոններու գործելակերպերուն, հետաքրքրուեցէք առնայ գործքերովն ու գրուածներով: Այժմու առևտրական անկալ և անկիրպարան մասերը դուք էք որ պիտի վերականգնէք ու բարւոյէք: Ու կապիտալիստներու սանձարձակ յստաջիտացումներուն դէմ կուրծք տալով, դո՛ւք էք որ պիտի փրկէք ժողովրդային ընդհ. զանգուածը չքաւորութեան ճիրաններէն:

Նոյնպէս, դո՛ւք, ով նորահաս սերունդ, աւագ պարտականութիւն մը պէտք է նկատէք տնտեսագիտական հայեացքները ուսումնասիրել ու գործադրել յետոյ ուրիշներուն ալ գործադրել տալ, եթէ կ'ուզէք որ առևտրական բողբոլած կեանք մը ստեղծուի թուրքիոյ հորիզոնին տակ, իբր ասպազայ փայլուն յաջողութեանց աւուր զօրավիգ:

Ամասիա

Գ. ՍԵՒՅԵԱՆՑ

Պատմական

Աշխարհի Յեղափոխական Մեծ Շարժումները

Ա.

ԱՆԳՂԻԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՊԻԹԻՒՆ

«Ազատությանը ակօրէն բազմաթիւներու
կը պարտինք:» **LIEBER**

1660ին, Մշուարդեան Կարգու իշխանը թագաւոր հռչակուեցաւ Կարգու Բ. աւանդով: Օրուան բարդամենտը անմիջապէս ընդհանուր ներում շնորհեց բոլոր աւանց՝ որոնք վերջին տպատարութեան ժամանակէն էին, բայց թագաւորը զրկատման գաղափարաւոր մի քանի դատարներէ: Այս գաղափարներէն տանկերէն ստեղծուեցաւ մանուկ հնկարկեցին, անոնց սրտերն ու ազիքները ողջ ողջ իրենց մարմիններէն դուրս քաշելով: Արքայապաններէն չտանքն ու ցիկանս բանտարկութեան դատապարտուեցան: Բայց յեղափոխութեան բուն պարագայները, ինչպէս Գրամվէլ և իր բնկերները, իրենց բնական մահուամբ արդէն քանի մը տարի առաջ ազատած էին բռնապետականներու այս վրէժիւրնդրութենէն: և սակայն կայսերական վրէժիւրնդրութիւնը աւանց դէմ այնքան խորտաքած էր որ, կարելի չէր մարդկային այդ կայր ու հրէշային կիրքը մեղմացնել, առանց սեէ կերպով գոհացում տալու աւանդ: Անգլիական կառավարութիւնը ծայր տալիճանի էր հասած, աւանդամալ ժողովուրդի մը նուիրապետական զգացումներն էին որ այժմ կուրաքար կը հրանչրուէին ամեն տեղ, և ատար համար ահա Գրամվէլի և իր երկու ընկերներուն ան-

շնչազած ու բորբոսած զիակները հանուեցան իրենց փառաւոր գերեզմաններէն, Դոյլորնի հրապարակ: քաշկռուեցով, Կարգու Ա. ի գլխատման տարեդարձին օրը՝ 1661ին, կառախաա բարձրանալով զխառուեցան: Ասուէ վրէժիւրնդրութիւն...: Չեն թողուր որ գոնէ մեռելները խաղաղիկ ննջեն իրենց շիրիմներուն մէջ անվրդով:

Ասիէ ետք՝ բարլամենտին երկրորդ գործը եղաւ վերհաստատել Անկլիքան Եկեղեցւոյն պաշտամունքը, ու տարտադրիչ դարձնել զայն ամենուն, խիստ օրէնքներ դնելով անաստող այլադաւաններուն: Նոյնիսկ հրապարտակով մը (Conventicle Act) բացարձակապէս արգիւտեցաւ միեւնոյն ընտանիքին չ'պատկանող հինգ կամ աւելի անձերու սեէ տեղ մը ազօթաժողով ունենալը, քանի որ տարիկայ Անգլիական եկեղեցւոյն ծէսերուն համաձայն չէր: Կարծես կրօնական յեղափոխութեամբ նշաւիրագործուած խզճի ազատութիւնն էր որ կուզէին բռնաբարել: Բայց դա այլևս անկարելիութիւն էր դարձած:

Սկովտիոյ մէջ՝ ազօթաժողովները խափանելու և Անկլիքան եկեղեցւոյ պահանջներն իրագործելու այս փորձը թունդ ընդդիմութեան մը հանդիպեցաւ երկրական ուխտեալներու կողմէ (Covenanters),

որոնք պաշտպանելով իրենց արդար ու վաղեմի իրաւունքը՝ յայտարարեցին թէ իրենք ազատ են չորենց Աստուածը իրենց ուղած եղանակով պաշտելու։ Ասոր համար անա երեցականներէն չառեր վայրագ նախատինքնելու ենթարկուեցան, չառեր լեռներն ու քարայրները հալածուեցան, հոն գաղտնի կերպով կատարելու իրենց կրօնական պաշտամունքները։ Չարմառայի էր որ Կարպոս Բ. առանց իր հօրը մահուան պարտգաները յիշելու, առանց իր կրած արարէն ու հալածանքէն փորձառական զատ մը քաղելու, ամէն բան մտայած, անպար բռնապետ մըն էր գարւած իր նախորդներուն պէս։

Կարպոս իւրը Կաթայիկ մ'ըլլալով, անգամ մ'աղկաւ տապալել Անկիքան եկեղեցին, և անոր տեղ հաստատել Կաթայիկները։ Գոյս իր բռնաւարական ծրարագիրներուն իրր յարմարագոյն գործիք ծառայեցնելու համար։ Կարպոս մինակը չէր իր արա դատապարտելի քաղաքականութեանը մէջ, անկէրայ իրեն ընկեր ունէր Եւրպոյ, մեծ բռնապետը՝ Լուդովիկոս ԺԴ. որուն հետ գաղտնի բանակցութիւններ ալ կատարելով՝ Անգլիոյ հանրային Կարծիքը իրեն գէտ յարուեցաւ, և Բողոքական ու Կաթայիկ համայնքները իւրար անցուն, թագաւորին բանեցուցած Էնգլիկներուն հետեանքով։

1685ին Կարպոս Բ. մեռնելով, իրերու այս տիւր վիճակին մէջ՝ անոր յաջորդեց իր եղբայրը Յակոբոս Բ., որ Սղուարդներու ըբր՝ արժանաւոր յաջորդ, գրեթէ իր եղբորը անամ անխոնձ գործերը շարունակելով, խիստ կարճատե դարձուց իր իշխանութիւնը։ Յակոբոս Բ. թագաւորներու ատաւածաշխ իրաւունց փորձապետութեան պիտը փարած՝ սկստու Կաթայիկները պեռական կրօնքի վերածելու տպուշ ձեռնարկներ ընել, հակառակ իր աւելած պաշտօնական խոստումներուն ու ապահովութիւններուն՝ Անկիքան և

կեղեցիին պաշտպանութեանը մտախն։ Այս թագաւորն ալ իր նախորդներուն պէս ուղած ատեն բարդամենաք նիստի կը հրաւիրէր, ուղած ատեն կը յետաձգէր կամ կը լուծէր, նոն իր կորօրը պէս՝ մեծն Լուդովիկոսի հետ գաղտնի էնգրիկներ կը լարէր իր ժողովուրդին դէմ։ Ալ Անգլիոյ մէջ զայրոյթ ու ատելութիւն ծայր տուած էին ամեն կողմէ, ամբողջ երկրին մէջ մպեռանդ Կաթայիկներէ գատ թագաւորին կուսակէջ մէկը չէր հնայած, ալ ժողովուրդը ամէն տեղ զգուած՝ ձանձրացած էր Սղուարդներու այս բռնաւոր բնաւնիքէն, ինչպէս Յուստայիք Պուռպոնեաններէն, ներքին խռովութիւն, եղբայրադաւ կոխներ անպակաս էին երկրին չարս կողմը, բայց այս բոլոր իրադարձութիւնները տեղի կ'ունենային միմիայն մէկ բանի համար, այն էր ազատութեան աւելի մեծախոս չաղչոյմը Ենգլիկական այս ամպոս երկնակամարին վրայ, այն ժողովրդագետական աւելի լայն սկզբունքներու շարափոյթ իրականացումը հասարակութեան բարձրութեան ինտատ։ Ինչու որ «ազատութեան անորէն բռնապետներու կը պարտինք» կը'ո՛ւ Լիպէր։

Ուրեմն Անգլիոյ բոլոր կուսակցութիւններն ազատական թէ պահպանողական ձեռք ձեռքի տալով՝ վճռեցին վստակ այս անօրէն թագաւորը, և անոր տեղ նստեցնել իր փեսան և Հոլանտայի գաւհերեց իշխանը՝ Ուիլեմը, որ Յակոբոս Բ. ի Մէյրի աղջկան հետ ամուսնացած էր և անոր մահէն ետք՝ Անգլիոյ գահն ալ արդէն իրեն կը վիճակէր։ Անգլիացիք պաշտօնապէս հրաւիրեցին Ուիլեմը ըլխանը, որ բնգունելով այս պատուարի կը բուէրր, անմիջապէս իր նաւատորմով ու բանակով ձամբայ ելաւ պէպ, Անգլիոյ Ազատարար իշխանին նուէրը Անգլիոյ ցամաքին դպած չի գտած, բանակն ու ժողովուրդը գրմաւորե ու ելան գիւք, Ուիլեմը իր սրարգած դրօշակներուն վրայ

գրած էր սա անկեղծ վերտառութիւնը.
«Կը խոստանամ պաշտպանել Անգղիոյ
ազգային կրօնն ու ազատութիւնները»
Այլ Յակոբոզ բացարձակապէս լքուած
ու անօգնական, փախուստ միայն կը
(Մնացեալը յաջորդով)

մնար իրեն. Թագուհին արդէն գաղտնա-
պէս զրկած էր Ֆռանսա, ուր շուտով ին-
քըն ալ հազիւ կրցաւ միանալ անոր, իր
պաշտօնական կնիքն ալ Թայմզ գետը նե-
տելով:

ԹԱԴԵՈՍ ԺԱՄԿՈՉԵԱՆ

Բաց Նամակ

Գերազանց

Տ. Գեորգ Ծ. Վ. Իբրանոսեան

Առաջնորդ՝ Ամասիա-Մարզուանի

Ամասիա

Կայդեալինք «Ազատամարտ» ի Յունիս
14 | 27 ի է 922 թիւին մէջ ձեր տուած
հերքումը, 'ի մասին Մայիս 6 թիւով
«Նոր Աշխարհ» օրաթերթին նէջ Մարշը-
ւանի թաղականական ընտրութեանց նը-
կատմամբ:

Հոգ՝ ի միջի ալլոյ՝ բոսած էք. — «Վեր-
ջերս Մարզուանի մէջ թաղ. խորհրդոյ
ընտրութեան առթիւ եկեղեցւոյ բակը
տեղի ունեցած ծեծկռուքին և քուէար-
կութեան խանգարման բուն պատճառը,
ո՛չ թէ դաշնակցականները, այլ մէկ քա-
նի Հնչակեան ուսուցիչներ եղած են...
Անո՛ւ ծեծկռուքին իսկական պատճառը:
Տէրը մի արտայէ արւանհեղութիւն մը չի
պատահած անմիջապէս դադրեցուցինք
քուէարկութիւնը»:

Ձեր այս հերքումին մէջ բացորոշ կը
տեսնուի թէ՛ կ'ամբաստանէք ուսուցիչ-
ներէն մէկ քանին, որպէս պատճառ նոյն
օրու ան խռովութեան և քուէարկութեան
խանգարման:

Ուսուցչական ժողովն իր այսօրեայ նիս-
տին մէջ նկատողութեան առնելով այդ
խաղիւրդ, տեսաւ թէ ոչ մէկ արդարացի
հիմ կը ներկայացնէ ձեր իր մասին ըրած

ամբաստանութիւնը, քանի որ՝ ո՛չ մէկ
ուսուցիչ գործօն մասնակցութիւն ունե-
ցած է ընտրութեան առնէն: Ընտրութեան
մէջ գլխաւորարար պայքար մղողները եւ
ղած են Հնչակեան եւ Դաշնակցական
մարմինները և աշակերտ լրականու-
թիւն մըն է թէ ծեծկռուքը և՛ իրարան-
ցումը առաջ եկած է քուէարկութեան
եկող և առուօտեան եկեղեցիէն ելլող ժո-
ղովրդեան եկեղեցւոյ բակը համախմբուե-
լէն: Ծեծկռուքին պատասխանատունե-
րը՝ դատարանի միջոցով ստուգելու հա-
մար դատական հետապնդում է կատար-
ուած, իսկ ո՛չ մէկ ուսուցիչ ամբաստան-
ուած է նոն, իբրեւ պատասխանատու օր-
ուան խռովութեան, մինչդեռ դուք չէք
խղճաւորիք ընելու այդ ձրի ամբաստա-
նութիւնը:

Արդ, ուսուցչական ժողովն կուգայ
բացատրութիւն պահանջել ձեռնէ թէ,

1.—Այդ հերքումը բառ առ բառ ձե՞րն
է, թէ չէ «Ազատամարտ» խեղա-
թիւրած է և կամ տպագրական սը-
խայնիք են պատահած:

2.—Որո՞նք են այն ուսուցիչները, ո-
րոնց ակնարկել կ'ուզէք դուք:

3.—Ի՞նչ ապացոյցներ ու փաստեր ունիք որ ուսուցիչներէն մէկ քանին պատճառ եղած են նոյն օրուան ծագած խռովութեան:

Կը յուսանք որ բարի պիտի ըլլաք անմիջապէս պատասխանելու մեր սոյն հարցումներուն:

Մնամք սրգիական յարգանքներով

Ի Դիմաց Ուսուցչական ժողովոյ

Ազգ. Ս. Սհկ. Իսաաի Վրժ. ր

Ատենադպիր Ատենապետ

Ա. Կորկոտեան Գ. Օղանեան

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Մեր պրած սոյն ամսակին պատասխանը Յուն. Սէն մինչեւ այսօր չստանալուս, հարկադրուած ենք բաց նամակի ձեւով հրատարակել զայն:

ԿՐԹԱՍԷՐ ԱԶԳԱՅՆՈՑ

Տէր,

Նկատելով որ ձեյթունի կրթական միջոցներուն ներկայ ոչ-բաւարար ու գոհացուցիչ վիճակը, Պոլսերնակ խումբ մը Ձեյթունի ուսանողներու նախաձեռնութեամբ Ձեյթունի մէջ բացուած է «Ժողովրդային գրողարան-թնթերդարան» սր, հետո կուտակչական հանգամանքէ: Այս առթիւ եթէ նկատի առնենք մեր պատրաստի նիւթակներ, իրաւ է թէ շատ յանդուգն քայլ մ'է ստանալ, բայց այդ խանդգնութիւնն ունեցած ենք վստահելով մեր կրթառէր ազգայնոց ցարդ Ձեյթունի

հանդէպ յոյս ստեւած այնքան ջիւղ համակրանքին ու հոգածութեան:

Հիմադիր յանձնախումբս, ներկայիւ կուզայ խնդրել Ձեզմէ, որ հաճիք կարելի միջոցներով նպատակ այս օգտաշատ ձեռնարկին:

Կանխադատ շնորհակալութեամբ ու յարգ.

Ի դիմաց Հիմադիր Յանձնախումբին Միւրան Աղադարեան Օննիկ Մահարեան

Հասցէ՝ Պոլիս, Դաղդիա, Ազգ. Կեդ. Վարժարան Օննիկ Մահարեան:

ՆԵՐԱՌ ՀԵՏԱԲԻՐԱԿԱՆ ՏՈՄՍԵՐ

Այս շարաք միւսնոյն օրուան մէջ բաւարար կրկու տոմսեր. մին Իբրանտեան վրդապետէ՝ իսկ միւսը Առաջնորդական փոխանորդ Մամբրէ քնչ. Ֆախիրեանէ, որոնք նոյնութեամբ կը գտնուեն ստորեւ:

Առ խմբագրութիւն «Ամասիա»ի

Արաբիքէս ստանալով ինքնաբերաբար ցարդ մուր վրկուած թերթերուն փոխարժէքը՝ Օ. 75 մէճիա, այսուհետեւ զադրե-

ցուցէք ստաքումը:

17 Յուլիս Գէորգ Ծ. Վ. Իբրանտեան

Բ. Տոմս

Խմբագրութիւն «Ամասիա» թերթի

Ասկէ առաջ ինքնաբերաբար բաժանորդ գրած էիք զիս «Ամասիա» թերթին. և ես ալ անգական այս նորածիլ մամուլին դոյզըն ինչ քաջալիկ հանդիսանալու համար մերժած էի:

Սակայն տեսնելով որ ինչ որ ցաւայի է անիկա իր կոչման չի ծառայիր, այլ մեծաւ մասամբ անհիմն լուրեր կը հրատարակէ և չատիրու արժանապատուութիւնը կը վիրաւորէ, ուստի այս թիւէն ըսկըսեալ կը հրաժարին արժանաւորութենէն. մինչև ցարդ մեզ զրկած թերթերնուդ փոխարժէքը 0.75 մէճիւս կը զրկեմ Ձեզ: 17 Յուլիս Մ. քննչ.

Խմբագրութիւնս այս երկու տոմսերը առնելէ վերջ ստուգեց թէ իրականապէս անոնց թերթ կը զրկուի եղեր՝ թերթիս վարչական մարմնի կողմանէ, զանոնք ևս նկատելով գրականութեան սատարող անձեր:

Փայով տոմսերու հեղինակներուն հոգեկան տրամադրութեան, ինչպէս կը տեսնուի՝ երկուքն ալ նոյն կերպով ազդուած և համադրածակից իրարու՝ գրած են այս տոմսերը: Մենք առիկ առաջ ալ ճիշտ այս կերպ քանի մը տոմսեր առինք՝ երբ խժապկաւթիւնս մը մասին շատ թեթեալ քննադատական երբաւ էինք. այն տեսն չի պատասխանեցինք՝ որովհետեւ անոնք անհատական բնոյթ ունէին և պատճառարանեալ չէին. իսկ այս անգամ իրաւնոսեան վարդապետի գրած տոմսն ալ նկատողութեան պիտի չառնէինք՝ եթէ միացած չ'ըլլար Մամբրէ Բ. ի տոմսին, թէ թուականով և թէ ոգիով:

Հետեաքար պարտք կ'զգանք այս տոմսերը անջատ անջատ վերլուծել, և տեսնել թէ ժողովրդեան մը հոգը իրենց ուսին վրայ առնող անձնաւորութիւններ պէտք է ունենան այս վերաբերումը:

Իբրանոսեան վարդապետը կ'ուզէ որ թերթին առաքումը դադրեցնենք՝ որովհետեւ մեր 17-18 թիւերուն մէջ իր մասին քննադատական քանի մը ստղեր կային: Անհատի մը համար այսպիսի ընթացք մը ներելի կրնայ ըլլալ, քանի որ ան որեւէ պատասխանատուութեան սուղեւ չի գրտնուիր. սակայն երբ առաջնորդ մը որ

կոչուած է հանրութեան մէջ գործելու՝ անոր ցաւերուն, պէտքերուն դարձան և զոհացում տալու, մենք իրաւուն ունինք խորհելու թէ պէտք է կարգայ իր մասին թեր ու դէմ գրուածքները և ճշդէ իր գիրքը, և կը խորհինք թէ Իբրանոսեան վարդապետն ալ ճիշտ այդ պիտի բներ արդէն՝ եթէ Մամբրէ քննչ.է ազդուած չ'ըլլար. և ինչպէս կը տեսնենք՝ տոմսերու և իմաստի տեսակէտէն այնքան նոյնութիւն կայ՝ որ մարդ կրնայ տարուիլ խորհելու թէ՛ երկուքը մէկ նստած երկար բարակ թերթը քննադատած և այս հակայ որոշման յանգած են:

Երկրորդ տոմսը երբ առնենք՝ հոն կը տեսնենք խայթելու տրամադրութիւն մը. նախ, իւր թէ թերթը որեւէ արժէքէ զուրկ ըլլալով, միայն քաջալերելու ազնիւ զգացումէ տարուած կէ պահէ եղեր: Սակայն տեսնելով որ «իր կոչման» այսինքն Մամբրէ քննչ. ի կարգութիւններուն ջատագովականը չ'ընենք՝ ալ կը քննադատէ զինք և չմեծաւ մասամբ անհիմն լուրեր կը հրատարակէ և չատիրու արժանապատուութիւնը կը վիրաւորէ» հետեաքար կ'ուզէ որ դադրեցնենք թերթի առաքումը: Այս տոմսը աւելի անկեղծ է և ներքին փափաքները պարզապէս կ'ըսէ. Քանի որ դուք զիս կը քննադատէք՝ հետեաքար ևս ալ թերթինիդ չեմ առներ, կամ թէ ձեր թերթին դէմ պիտի գործէմ կ'ընեմ: Այսպէս կամ այնպէս մեր այս երկու կղերականներն ալ չեն ուզեր քննադատուիլ: Իբրանոսեան վարդապետի գործունէութեան մասին պէտք է 'ունինք բաւ մ'իսկ խօսելու. քանի որ Մարգրեանի քանի մը շարթումն կեանքը արդէն ցոյց տուաւ իր ներքին տրամադրութիւնները, որոնք էին՝ զոհել ազգային ավելի արժանապատուութիւն՝ ի նպաստ իր էլիքին:

Այս տեսանք և համոզուեցանք նոյն իսկ հոս ունեցած իր կողմնակցութիւններ:

րով որոնց մասին պիտի անդրադառնանք երբ պէտք տեսնենք: Սակայն Մամբրէ քահանան պէտք է ցոյց տայ մեզ մէկ հաւտիկ յուր՝ և մէկ հաւտ վերաւորուած արժանապատուութիւն՝ որ իրազեկեան հակառակ և չարակամութեամբ եղած ըլլայ. մենք իր իսկ պատասխանը պիտի դնենք հոս, օտանց որեւէ յապաւում չենք:

Մենք պիտի թելադրենք մեր յարգելի եկեղեցականներուն և ամեն անոնց որոնք հանրային պարտականութիւն մը ունին տաւժ իրենց տար, նախ կարգան. ընդդիմադիր թերթերը՝ և եղած քննադատութիւններէն իրենց կեանքը ազդեն. իսկ եթէ ստույգներ կան, անոնք ալ հերքեն: Հակառակ պարագային պիտի մընան միակողմանի զարգացման մէջ. ինչպէս որ մենք մեր իրականութեան մէջ ունինք կուսակցութիւն մը, որ կը հետեւի ճիշտ մեր Մամբրէ քահանային քննադատութեան, սակայն՝ մենք կը խորհինք թէ տեղի ճիշտը Մամբրէ քահանային կը հետեւի իր վարդապետներուն շուրջին:

Իթթիհասար քննադատութեան խառնփելու համար դադրեցուց ըստ ընդդիմադիր թերթերը. սակայն կրցաւ իր նըպատակին հասնիլ. այսօրուան քաղաքական տաղանդներն ազդակի իր տկանները գոցելուն արդիւնքը չէր. ինչպէս ըստ ենք Երրանտեան վրդ.ի, (երբ անիրա-

ւութիւն կայ, երբ ձեռնարկ մը ճշմարտութեան վրայ հիմնուած չէ, հակառակ իր անպարտելի կարծուած ուժին՝ ժամէ ժամ, թողէ թողէ պէտք է սպասել անոր տապալման): Մենք՝ սիրով պիտի զեռնդէինք հոս այն քննադատականները որ կրնան հաստատել թէ «անճիշտ լուրեր կը հրատարակենք» հակառակ պարագային մենք դեռ ունինք այնպիսի բանիքներ, որոնք պիտի թուենք կարգով և միտումի փառերով և վկաներով, որոնք Ձեզ պատասխանատուութեան ներքե կը ձգեն այն ժողովուրդին առջև՝ որոնք հովուելու կոչուած էք գոթադատար:

Իսկ գալով ձեր զրկած դրամներուն, շատ տարօրինակ կը զանենք տոտը հոգեւորութիւնն ալ. եթէ իրաւ թերթը քաջալերել էր նպատակնիդ, պէտք էր դրամը վճարած ըլլայիք ոչ թէ հիմայ՝ այլ այն տանն՝ երբ մենք թերթով կրկնաւ պէս կը շեշտենք անոր շնորհը: Հիմակ մեր այս կարծիքը փորձառութեամբ կրցանք հասկնալ թէ ինչպէս կարելի է դրամ գանձել բաժանարարներէն. քննադատէ՛ և դրամը ինքնաբերաբար կուգայ. սակայն մենք ձեր զրկած դրամը յատկացնելով բարեգործական նպատակի մը, պիտի ազարկենք մեր թերթերէն ձեզ ճիշտ, որ իրաւք թէ ինչ կը խորհին ձեր հօտին անգամները ձեր մասին:

ԽՄԲ.

Թերթիս խմբագրապետը՝ Մինաս էֆ. Իիէքճեան փոխադրուած ըլլալով Ալազ Բէօփրիս պաշր թաղը, Իթթիհասար նախկին դպրոցի շէնքին մէջ, կը յայտարարէ իրեն պէտք ունեցողներուն՝ արպէսդի հաճին հոն դիմել:

Ամսոյս 20ին Ամասիոյ պարծանքը եղող առևարական սիւժ անձը՝ Մհ. Մարութ էֆ. Իրքանտեան տեղս ժամանեց, ու ներկայ գտնուեցաւ ամսոյս 22ին Իրքանտեան առևարական վարժարանի տղա-

յոց ամուլերջի հանդէսին, և 23ին՝ ազգականց գարոցի հանդէսին:

Թաղապետութեան ուշադրութեամբ կը հրաւիրենք գետեզերքի անտանելի փաշին՝ որը բոյնը ըլլալով շատ մը հիւանդութեանց, ամբողջ քաղաքի առողջութեան վրայ զգալի կ'ընէ իր սղլեկութիւնը:

Արտուստիւր՝ ՀԱՅԿԱԶՈՒԿ, ԹԱՊԻՆԵԱՆ

Խմբագրապետ՝ ՄԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ

Տպ. ՅՈՎՀԱՆՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԻՆԵԱՆ

بنه تعالی تشرین تائینک ابتداسنده مجلس
عمومی کشاد ایدلک اوزره مبعوثان انتخابات
عمومیه-نک قانون مخصوصی موجبجه هر درلو
مداخلات و تعقیبات شوء استعمالدن آزاد و
صورته اجرائی تائیا لازم کلان تدابیر خاصه
اعتنا ایدلسنی و کلامزک حمیت وطن پرورانه سندن
انتظار ایدرم جناب حق توفیقات سبحانیه سی
اوزان بیورسون آمین .

دوکی کون باب عالییه احتفالات لازمه
ایله قرأت اولنان خط هاونک صدر تعظمان
بلیغ بیوریلان صورتی بالایه نقل و ۲۴ تموز
سنه ۳۲۸ تاریخی تلمرافنامه ولایتناهی به بناء
اعلان النور ۲۵ تموز سنه ۳۲۸

آماسیه متصرفانندن

صورت

کچن سنه سمید پاسا قایمه سی ایله ظهور
ایدن اختلاف اوزر سنه مجلس مبعوثان فسخ
ایدلش و یکیدن انتخاب اولنان مبعوثان بالا اجتماع
۵ نیشان سنه ۳۲۸ تا تخنده مجلس عمومی
کشاد اولنوب قانون اساسینک اوتوز بشعی
ماده سنک صوک فقره سنده مصرح اولدی و حله
حکمه متله مفسوخه مبعوثان اوره سندن مختلف فیه
اولان مسائل حقنده رأی و قراری ویرمش
ایدی معلوم اولدینی اوزره قانون اساسی
حکمنجه مجلس مبعوثان احوال عادیله مبدأ
اجتماعی تشرین تائینک ابتداسی و منتهاسی
نیسانک غایه سی اولدینی و بعد الفسخ انتخاب و
قانون اساسینک یدنجی ماده سی حکمنجه اوج

ایده اجتماع دعوت ایدلک لازم کلان هیئات
جدیده مبعوثانک مدت مأموریتی نه دن عبارت
اولدینی قانون اساسیده غیر مصرح و قانون
اساسینک تفسیری هیئات اعیانه عائد بولندینی
جهتله فسخ اوزرینه نیسانک بشنده اجتماع
ایتمش و بادی اختلاف مسئلهیه اوتوز بشنجی
ماده سنک صوک فقره سی موجبجه رأی و قراری
ویرمش بولنان هیئت جدیده مبعوثانک مدت
مأموریتی نه اولدینک تفسیری ضمننده حکو
متجه مجلس اعیانک لدی المراجعه مجلس عالی
مذکور دن قانون اساسی توفیقاً و تفسیراً
یوکره اعطا اولنان قرار نامه ده هیئات جدیده
مبعوثانک مدت مأموریتی مختلف فیه مسئله
حقنده صفت حاکمیت ایله قرار اعطاسیه
مخصوص و منحصراً بولندینی بیان اولسنه بناء
مجلس عمومینک مدنی و مأموریتلری ختام
بولان مبعوثانک برلرینه یکیدن انتخاب اجرائی
خصوصنه اراده سنیه جناب پادشاهی شرف
متعلق بیورلشد و حکم منبی یوگون مجلس
اعیان و مبعوثانده بالقرائه اشاد ایدلشد کچن
انتخابنده مأمورین طرفندن ایقاع ایلایکی روایب
اولنان مداخلات و معاملات قانون شکنانه نک
تکرری متجاسر لری حقنده بادی اشد مسئولیت
اوله جفندن نو دفعه انتخابک هیچ بر طرفدن
بر کونا مداخلات و قضیقات وقوعه امکان برا
غلمق سزین کمال سربستی ایله اجرائیه فوق العاده
اعتنا ایدلسی لازم کله چکی و انتخابات صور
اجرائیه سنه دار داخلیه نظارتندن تمهیا آروجه
تبلیغات واضحه ایفا ایدیله چکی مجلس و کلا قرار ایله
تبلیغ اولنور .

مراجعت ایدنجه در حال تحصیل اولونوردی فقط شمعی حاله سرای قصه سنده حقوق اجرا و
لائر محکمه لری بوقدر چوق دفعه لری اصناف لری بر جوعی طرفندن وان ولایت جلیله سنده بوباده
مراجعت اولدریسه ده هیچ ر ثمره حاصل اولدینی کبی جوابه دخی نائل اوله مدیلر . بر سنده دن
بری شرعی محکمه سی کشاد اولشمه ده انک یایدینی معامله لر اصنافه الوریشلی دکلدر زیر محکمه
شرعیه نك ویرمش اولدینی اعلامك حکمی وان ولایتنجه کب قطعت ایدنجه دکین سرابده
ایش الدن کیدر.

مثلاً. — تاریخدن بر قاجکون مقدمه اوچیوزیکرمیدی سنه نك ملتزم لردن سر ایلدرویش
اوغلی حالک اعصار مسئله سندن مقوری عشرت رئیس نجیب بك ایله دعواسی وار ایش .
محکمه شرعیه نظامی موجبنجه معین ایامده حاضر اولق اوزره طرفنه جلیله نامه کوندریلور .
جلیله نامه نك مومی الیه نجیب بک تبلیغی اتاننده نجیب بك — « حاکم کز خرمز و ملتزم لره شریکدر»
دیه جلی قبول ایتوب رد ایدر.

بو ودها بوکا داتر مسئله لر حقنده وان ولایت جلیله نك نظر دقتی جلب ایدرز.

ربشورق

خط هایونك صورتی

وزیر معالی سمیرم غازی احمد مختار پاشا
کچن سنه وقوعبولان فسخ اوزربنه مجدداً
انتخاب اولوب نیسانک بشنده اجتماع ایتش
اولان هیئات جدیده مبعوثانک مدت مأمورینی
بادی اختلاف و فسخ اولان ماده به صفت
حاکمیتله قرار ویرمه که مخصوص و منحصر اولدینی
قانون اساسینک تفسیر احکامیه مکلف اولان
هیئات اعیان طرفندن ویریلان قرارده کوترلمش
اولسنه بنه مجلس عمومینک سدی و مبعوثانک
مأموریتلری ختام بولمش اولق جهتیه انتخابات
جدیده نك اجرامی خصو صلینه دون کیجه
اراده سنیه من صادر اولدینی و اراده منک قرانی
بو کون بمدالظهر ساعت برده انتظار ایدلمی

مقام صدارتدن هیئت اعیان و مبعوثان ریاستلرینه
قبل الظهر تدفیر افله تبلیغ قلندینی حالده هیئات
مبعوثانک قبل الظهر اجتماع الیه هیئات اعیانک
قانون اساسی موجبنجه حاکم اولدینی حق تفسیر
اعتراض و هیئات وکلا حقنده عن القیاس
اتخاذ فرار ابتدکی مبعوثان رئیس سابی طرفندن
بیادریلوب مخالف قانون مشروطیت اولان بو
حرکت نزد شاهانه مزده تأسفی موجب اولمشدر.
هیئات وکلا من حقنده اعتماد هایونم برکال
اولدینی سوکیلو ماتمه کده امنیت و محبتی درکار
اولدیفندن قانون اساسی و مقتضیات مشروطیت
تومیقاً متشکل هیئات وکلا نك سعادت و انتظام
عمومیه عزم و غیرت کامله الیه دوام ایتسنی و

کی ففاره شمسکی اهایلنک باشنه بویک بره فلاکت کله چکی و نتیجه سی انتظار اولنیورابدی. نتیجه نیجه کویلرک قیون و حیواناتلری بویوزدن کیتدیکی کچن سنه نك غزته لرنده بر قاج ادملر طرفندن یازلمش اولمقله بو باده ایضاحاتی فضله عد ایدرز.

شمسکی عشیرت رئیس سمدالله بك زرادری علو ماه حال رومینك بشنجی کونی غشا لرلنده بولنان ایکی یوزی متجاوز سواریلری طویلابوب ایران و سمنقو عشائری کویلری بولنان ترساوه و دیگرلرینک قیون و حیواناتلرینک کتیریمسنه کوندردلیدی صوك کونلرده ایشیدلیدی کی. شمسکیلرک حیواناتلرک ایراندن عمانی حدودنه اشیردجقلری صیردلرده سمنقو الی سواریسینه یتیشیر. آئیده حدودلرده بولنان چلیک رازی و هره تل مفرزه قوماندانلقلرینه خبر ویرلیدی برطرفن شمسکی عشیرتی ایکی یوز سواریدن متجاوز و مرقوم اوج مفرزه عسکرلری دیگر طرفدن دخی سمنقو کندیسنه کان سواریلریله ایران ایله عثمانی حدودده یکدیگرسنه چاریشیرلر. اوتادری بزه کلان معلومنه نظراً هره تل مفرزه قوماندانک بوبادکی شجاعت و فعلیتی شایان تقدیردر. یعنی محاربه نك اهمیتلی زماننده درحال کروییه بوری اوردرندیروب کندیسسی یاقین اولان کوینک انجروسنه قاجهرق عسکرلرده سیرلندن چیقوب رجعتنه میدان ویرر اشته اولوقت دشمن فرصتدن بلاستفاده بردن بره عسکر اوزرینه هجوم ایدرک موکیلی عسکر برادرلر مژک بر قاجلری اتلاف و بر طاقلری مجروح حلسده راقوب و بش نفر دخی طوقوب اسیر نامیله یانه کتورمشلوردر. شمسکیلر ایسه هره تل قوماندانک قاجدیغنده صاوشمشلوردر هله مقتول و مجروح عسکرلرک تفنک و یارملری کتوروب کورمدکارنه کلنجه.

ماه حالک اونبشنجی کوننده مجروحلری کیرو المی ایچون بورادان ادم کودردکاری صیردهده سمنقو مجروحلره اونکی عدد دخی ماوزر و برمه و عهد ایدوب دیگر تنککراک ایسه کندی طرفندن کتورمدیکی کیدن ادمی تا مین ایشدر. سمنقونک یاننده بولنان بش نفرلرین ریسسی وفات ایدوب دیگر دردی دونکی کون قانوردن رازی به کتیردجکاری مرویدر. محاربهده سمنقونک طاقندن اوج مقتول وایکی مجروح وار ایش.

خیلی برمدتدنری سرای (محمودی) قائمقامقدر. اهایلنسی مهاجرلر ایله برابر اوجیوز الی خانهدن عبارت برقصهدر. فقط مقصدمن قصبه نك سکنه سنک مقداردن بحث ایتک اولیوب انجق وان غریبلری بولنان یوز کشتی بی متجاوز دکنجی و اصنافلرینک احوالی عرض ایتکدر. هرصله اوتدن برو سرای دکانجیلرینک و اکثریت اوزره تجار قسمنک کیتلی و بردهیهلری وارددر. اعلان مشروطیتدن اول اصنافک عشائر کوردلرنده الاجبی اولدینی زمان کورد بکارینه

اھالیسی

طشره منادیسی

نومرو ۱۹

۱۵ تموز سنه ۱۳۲۸

برنجی سنه

اطرافره باقمه.

وان ولایتک شرق جوارلری بولسان یعنی باش قلمه دن وان کویلرینه و اورادن تیمار ارجک وسرای قضا و ناحیه لک بی چاره اھالیسی ایکی سنه بی متجاوز خرسز واسقیالر النده اسیر اولمشلردر. بواسقیالرک اک مشهوری ایسه ایران ایله عثمانی حدودک قنور قریه سنده کائن سمقو (اسماعیل در.

اوچیوز یکریمی دوت سنه سنده اعلان مشروطیتدن بر سنه یه دکن صبر ابدوب اندن صوکره سمقو بر قاجکرملر کنبدنی عثمانی حکومتته کوستره بیلدیسده عثمانیدن کنبدیسنه قارشو هیچ بر نمانات کورم دیکندن دیگر طرفدن مکس. شتاق ونور طوز ناحیه لرندن کنبدیسنه مرا جعت ایدن میر محمد. قادره جعفر اشقیالریله کنبدی قوتک کون به کون تریدینی کوروب بیلدیک یابدینی جرملری اترمه باشلادی حتی کچن اوچیوز یکریمی یدی سنه سنک ایلولک یکریمی سکزنجی کوننده رازی ایله قانور طاغیری ارسنده عثمانی عساکر برادرلر منزله دهشتلی بر حریده بولنهرق نفوسجه بیوک بر تلفات ویردکن ماعدا طقوز عدد کوچک چاپلی ماوزرلر کونورمکه جسارت ایده بیلدی.

بونکله اکفا ایتیمورز چونکه محارنهک زودن حصوله کلدیکنی عرض ایدم. اوچیوز یکریمی یدی سنه سنک حزران نهایتلرنده مذکور سمقونک عشاثرندن ایکی ادم امور ذاتیه لرینک تسویه سیچون عثمانی طوپراغک شمسی عشاثری ایچروسنه کلمشلردر هر نه دنسه بیلمم مرقوم ایکی ادملر شمکیلر طرفندن اولدیریلوب حزرانک یکریمی طقوزنده جنازه لرینک قاولیک ایله ستاناس آرسنده بولندیقنی درعقب سمقوبه خبر و بربرلر بوندن طولانی شمسی ایله سمقونک عشاثرلری اراسنده بیوک بر دشمنک حاصل اولدینی

ՓՈԻԹԱՑԷՔ ԱՆՄԻՋԱՊԷՍ

ԴԻՄԵԼ

ԿԱՐԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ

ՋԻՆԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ

ԲԱԼԸԳ ՊԱՇԸ — ՍԱՄՍՈՆ

Կր վաճառե ամեն կարգի ու ամեն սե-
սակ՝ փափուկ 0 | 25 գեղջուկ: Թող դի-
մեն, բոլոր առիթեն օգտուիլ գիտցողները
վստահ թլլալով թէ իրենց շահը նկատի պի-
տի առնուի միշտ: Օճ փորձեցեք եւ հա-
մոզուեցեք:

Փ. ՀԱՅԳԻ ԱԶԳ. ՊԱՇՏ. ԿԱՐԱՊԵՏՆԵՐՈՒՆ
Այն բոլոր Լեզ. պաշտօնական մարմիններն
որ մեր անցեալ 43րդ. թիւի խաբարականը
կարգալէ յետոյ կ'ուզեն մեր միջոցաւ Տեսուչ-
ներ, Տեսչութիւններ, Ասուցիչներ, Ասուցչու-
հիներ ու Մանկապարտիզպանոհներ հայ-
թայթել՝ թող բարեհաճին գրել մեզի թէ:

1.— Ի՞նչ տեսակ պաշտօնայ կ'ուզեն, ի՞նչ
գործի եւ ի՞նչ նիւղերու համար:

2.— Ի՞նչ պայմաններ ունին: եւ այլն:

ՈՒՍՈՒՑՁՈՒԹԵԱՆ.—

Նոյնպէս բոլոր այն՝ Տեսուչներն ու Տես-
չութիւններ, Ասուցիչներն ու Ասուցչուհիներ-
ըն ու Մանկապարտիզպանոհներն որ մ.
իւրեալ խաբարականը կարգալէ յետոյ մեր
միջոցաւ պաշտօն ձեռք բերել կ'ուզեն թող
բարեհաճին գրել մեզ՝

1.— Բնիկ ո՞ր տեղացի են, ո՞ր դպրոցէն
երջանաւարտ են. հանք՝ տարի ե ի՞նչ պաշ-
տօն կր վարեն եւ ո՞ր տեղերու մեջ, ի՞նչ նիւ-
ղերու համար նախատրուութիւններ ունին:

2.— Բարեւոք պաշտօնավարութեան ու
ուսուցչութեան վկայական ունին:

3.— Մեր տեղերու մեջ կ'ուզեն պաշտօ-
նավարել ի՞նչ տեսակ պաշտօններ. եւ ի՞նչ
պայմաններով: Այժմ ո՞ր կը գտնուին.

—ԽՄԲ.—

Մ. Խ.— Ինչպէս խաբարականին մեջ ա՛յ
բտւած է, Փ. Հայքի երջանակէն դուրս ա՛յ
եղած դիմումներուն գոհացում տալ պիտի
ջանանք:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ

ԱՄԱՍԻԱ



Ոսկի գործն եւ պրիմ հատել տեղի-
շոյս արհեստական սաւմներ շինելու
Լեւերիկեան մեքօսը սորվիլ ուզող
բոլոր սաւմնաբայներու կը յայ-
տարարէ թէ ինք պատրաստ է այդ
մեքօսը սորվեցնել նպատաստօր
պայմաններով:

اوتل كبره ميتجان

مدر

طرازونى ارداتيس

مرزيفون

يکى باوغرى بولده هواىى كوزل ويكى يابلس

اولان بواوتلده هر شئى غايت تميز اووب اوتلك

مدبرى مسافرلىرى صولك درجه ممنون ايله جكى

مهد ايل

ՕԹԷԼ ՔԻՐԼՍԻՏՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏՆԵՐ

ՏԵՐԸՆ

ՏՐԱՊԵՏՈՒՄԻ ԱՐՏԱՇԷՍ

Նոր չիտակ ճամբուն (եղնի տողրու եօլ)
վրայ օգտատուն դիրքով և հանդստուէտ
ամէն պայմաններով օժտուած նորահաս-
տատ հիւրանոցին մէջ ճամբորդներ ամէն
տեսակ դիւրիւթիւններ ու հանգիստ կը
վայելեն, Ճաշակատը, կանոնաւոր և
մաքուր սպասարկութիւն: Միտի հիւրա-
նոցը Մարգուանի մէջ, ուր իշխանողը
պիտի մէկնի գոհունակութեամբ:

آماسی

شرائط اشترا
بر سنه لکی بر مجید
الی آباتی یارم مجیددر

صاحب امتیاز و
مدیر مسئولی
حایقازون طیبیان

سر محرری مناس ایکیجیان یاخود

طشره منادیسی

سیاسی فی ادبی اقتصادی و اخلاقی غزته در
هر اون بش کونده بر نشر اولنور

نومرو ۱۹

۱۳۲۸ تموز ۱۵

برنجی سنا

محتویات

ریشدونی

«اطرافزده باقهلم»

رسمی اوراقلر

مطبعه مزده ترکیه ارمینیجه رومجه فرانسیزجه و انگلیزجه ایساناریله هر نوع اعلانات،
اوراق تجاریه، قارت ویزتله، مکینوب باشلری، کتابلر، غزتهلر و مطبوعاته عائد سائر هر نوع
ایشلر غایت تمیز و مزاق اوزره طبع اولنیور. مقصد یکنه من محترم مشتریلرمیزی ممنون
قلماق در. هونانیان و یاردیمیان شرکاسی

Sayarandhu մէջ Տանկերէն, Հայերէն, Յունարէն, Ֆրանսերէն, եւ Անգլի-
իերէն լեզուներով ամէն Տեսակ Ազդեր, Վաճառականական քղեր.
Քարտ վիզիթներ, Նամակագրութիւններ, Գրքեր, Թերթեր եւ sayarandhu
ուրիշ ամէն Տեսակ գործեր խիստ մաքուր եւ նաւականոր կը sayarandhu լինի:
Միակ նպատակնիս է գոն քողով յարգելի յանախորդները:

ՅՈՎ.ՆԱՆՅԱՆ Եւ ԵԱՐԴԻՄԻԱՆ

آماسی

مطبعه هونانیان و یاردیمیان